**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am
------------------------------------------------------------------------------------------------------------------------

Երևանի քաղաքապետի ժամանակավոր
պաշտոնակատար **Կամո Արեյանին**

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,
հեռ.՝ 077 484-554)

Հարգելի պարոն Արեյան,

համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

Երևան քաղաքի Կարապետ Ուլնեցի փողոց հ. 32/11 և 32/12 հասցեների հողակտորի վրա 2011 թ-ից կառուցվել է առանձնատուն: Նշված հասցեների հողակտորները 2008 թ-ից մինչ օրս սեփականության իրավունքով պատկանում են քաղաքացի Սուրիկ Սերգեյի Խաչատրյանին:

Քաղաքապետարանը մեր գրավոր հարցմանն ի պատասխան օգոստոս ամսին հայտնել է, որ նշված հասցեում բնակելի տուն կառուցելու նպատակով շինթույլտվություն է տրամադրվել 2018 թվականի հունիսի 8-ին:

1. Ինչպե՞ս է ստացվել, որ նշված հասցեի առանձնատունը կառուցելու համար շինթույլտվությունը տրամադրվել է 2018 թ-ին: Դրան նախորդող տարիներին այդ հասցեների վերաբերյալ շինթույլտվություններ երբևէ տրվե՞լ են:
2. Արդյո՞ք մինչ այդ Սուրիկ Խաչատրյանն ապօրինի կառուցապատում չի իրականացրել: Եթե այո, ապա ի՞նչ քայլեր է ձեռնարկել քաղաքապետարանն այն կասեցնելու ուղղությամբ:
3. Որքա՞ն գույքահարկ է վճարվել այդ հողակտորների և առանձնատան համար վերջին 7 տարիների ընթացքում:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):




| | A | B | C | D | E | F | G | H |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 596 | 01/18-Ս-2923 | -595 | 06-июн-18 | Սուսաննա Սիմոնյան | | Կենտրոն,Իսակովի պող. 7/11 | Հասարակական նշանակության շինություն | |
| 597 | 01/18-Տ-292 | -596 | 07-июн-18 | Ռուզան Պետրոսյան | | Էրեբունի փ. 312. | մուտք, ճակատի արդիականացում | |
| 598 | 01/18-Մ-4330 | -597 | 08-июн-18 | Հեղինե Մնացականյան | | Մալաթիա-Սեբաստիա,Հաղթանակ թաղ. 1-ին փ. 1/106 | բնակելի տուն | |
| 599 | 01/18-Խ-1169 | -598 | 08-июн-18 | Սուրիկ Խաչատրյան | | Քանաքեռ-Զեյթուն,Կ.ուլնեցու փ. 32/11 և 32/12 | բանակելի տուն | |
| 600 | 01/18-Ա-3924 | -599 | 08-июн-18 | Գագիկ Արեյան | | Ավան,Աճառյան փ. 11/5 և1-ին փակուղի 11 | կցակառույց | |
| 601 | 01/18-Ռ-82 | -600 | 08-июн-18 | Հովհաննես Կարապետյան | | Էրեբունի,Ռոստովյան փող.հ.15/7 և 15/8 | հասարակական նշանակության օբյեկտ | |
| 602 | 01/18-Դ-771 | -601 | 08-июн-18 | Ալբերտ Դադոյան | | Դավթաշեն 4-րդ թաղ. 10/9 | վերնահարկ | |
| 603 | 01/18-Ս-2866 | -602 | 08-июн-18 | Թամարա Սարգսյան | | Դավթաշեն 2-րդ թաղ. 26/8 | հասարակական սպասարկման օբյեկտ | |
| | | | | | | Մալաթիա- | բազմակի օգտագործման /Ա- | |

Активация Windows
Чтобы активировать Windows, перейдите в раздел "Параметры".



Տիրայր Մուրադյան
23 օգոստոսի 2018 թ.